

է տապախառն ջերմը , ամենեւին պէտք չէ վախնալ , քանի մը օրուան մէջ վարպետ բժշկի մը ճարտարութեամբը կըրնայ անցնիլ : Սակայն թէ պարզ ըլլայ և թէ խառն , պէտք է մէկէն բժիշկը կանչել : Իսկ տապախառն ջերմին գալուն նշանները ասոնք են :

Ընթի օրը յոգնածութիւն մը կ'իմանայ մարդ , մազերը կը տնկուին ու թեթեւ տաքութիւն մը վրան կու գայ . երկրորդ օրը մորթին վրայ մանր մանր կարմրիկ բիծեր կ'ելլեն , որ շուտ մը կը խոշորնան ու շատ կը կարմրին , այնպէս որ կարծես թէ մորթը կարմիր ներկուած է , սաստիկ կը տաքնայ , կը չորնայ , ցաւիլ ալ կը սկսի :

Ընտեսն հիւանդը ցրտէ , խոնաւութենէ , սաստիկ տաքութենէ , ամէն տեսակ կերակրէ ու գրգռիչ բնականներէն զգուշացնելու է . մնացածը բժիշկը կ'ընէ : Բայց բժիշկը շուտ կանչելու է . ապա թէ ոչ բանը գէշի կըրնայ երթալ :

Նաղիկն ու վարդախտն ալ տապախառն ջերման պէս թէ համաճարակ են և թէ փոխադրական . որոնց վրայ յաջորդ գլխոյն մէջ պիտի խօսինք :

Արիշ տեսակ մը խիստ վնասակար ջերմ ալ կայ որ քրեակ ջերմ կ'ըսուի , և քանի մը օրուան մէջ կրնայ ամբողջ ժողովուրդներ տանիլ . մէկուն վրայ որ աս ջերմը գայ , մէկէն բժիշկը կանչելու է : Պատեալ ջերմը աւելի խոնաւ ու վատաւոր յանդերու մէջ կը պատահի , ինչպէս նաև քիչ հովահրած ու աղտոտ սններ , և այնպիսի մարդկանց կը հանդիպի որ ամենեւին մարմիննին չեն լուար , հագուստներնուն անհոգ են ու անառողջ կերակուրներ կ'ուտեն : Ըստ նման են նաև ուրիշ ամէն տեսակ վնասակար ջերմերը , մանաւանդ ջրային ջերմերը : Երկրորդ զիպուածներու մէջ որչափ որ կարելի է պէտք չէ հիւանդին մօտենալ , ամենայն կերպով զանիկայ մաքուր պահելու է , ընդարձակ սրահի մը մէջ դնելու , և անդադար ծուխ տալու է , մանաւանդ քլորով :

լու է , մանաւանդ քլորով :

Վեղին ջերմը վերը ըսածներնու շատ կը նմանի . աւելի այրեցած գօտւոյն տակի երկիրները կ'ըլլայ և անկէց երբեմն Եւրոպա ալ կու գայ : Ըստ սոսկալի հիւանդութենէն բռնուողը երկու օրուան մէջ կը մեռնի սաստիկ ցաւերով : Հիւանդին գրեթէ բոլոր գործարանները մէկէն կը բռնուին ու սոսկալի կերպով տապալարկելով հոգին կու տայ :

ԱՍՏԵՂԱԲԱՆԸՆՈՒԹԻՒՆ

Նորաւոր և ուր գտնած գիտաբանն ու մուրաբի լրայ 1. — և ուրիշ նոր մուրաբի մըն ալ :

Ան գիտաբանը , որ սեպտեմբերի 5ին Պոչեմիոյ Սէնֆրէնպերկի դիտարանէն Պորոսէն աստեղաբաշխը գտեր էր , և սեպտեմբեր 9ին Մովէ ու Ռոպերդարն աստեղաբաշխներն ալ գտեր էին , օգոստոսի 29ին միացեալ նահանգաց Բէյմպրիճի դիտարանէն Պոնա տեսեր է եղեր , որով առաջին գտնողն ինքը կ'ըլլայ : Պոնա օգոստոսի 29ին այս գիտաբանը 11° 09' 45" հեռուալ գրից մէջ գտեր է . ՈՒ = 3° 24' 49" , 67 և խոտմ . հիւս . = 88° 00' 37" , 9 :

Հայնտ աստեղաբաշխն սեպտեմբերի 13ին գըտած մոլորակը , զորն որ Պեգասոս ըսուած համաստեղութե թևին վրայ տեսեր էր և 9^{րդ} կարգի աստեղաց մեծութիւնն ունի՝ հրատի ու Լուսնի թագի պարունակաց մէջ անցը պտտող մանր մոլորակաց խմբէն է : Հայնտ աստի անունը Վիլհելմ գրեր է , նշանն ալ գափնիի ճիւղ մըն է , վրան աստղ :

ՆՈՐ ՄՈՒՐԱԲԱՅ ՄԵՆ ԱԼ : — Անիպալ տէ կասպարիս Նափոլի աստեղաբաշխը որ ասկէ առաջ հիւստիս և Պարթենոպէ ըսուած մանր մոլորակները գտեր էր , ամսոյս սկիզբները ուրիշ պզտի մոլորակ մըն ալ գտեր է , որ 9—10^{րդ} աստղի մը մեծութիւնն ունի , և հեռուալ գրից մէջ էր .

1850 նոյեմբեր

	Միջին ժամ Նէպոլոյ	Ուղիւ ետ	Ռաստմ. թ
2	7° 34' 6" , 4	30° 31' 49" , 9	+7° 58' 55" , 0
3	7 21 41 , 4	30 14 59 , 3	+8 0 18 , 5

Հրատին ու Լուսնի թագին պարունակացը մէջ աստեղանքը պտտող մանր մոլորակները ասով 1^ժ հատ եղան , և են Ղեմբէ , Պուլս , հէրս , Վէրս , Արբէ , հէբէ , Իրիս կամ Երեման , Փուրս , Մէրիս , հիւստիս , Պարթենոպէ , Վիլհելմ և այլնոր մոլորակս :

1 Տես երես 320 :